

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝
«ՆՈՐԲԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

«Նորբի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) Երևանի Արզումանյան փողոցի հ.8/1 հասցեում գտնվող հողամասի սեփականատերն է, որը նշված հասցեում իրականացնում է 12 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկեր ունեցող՝ ընդհանուր 7386.4 քառ. մ բնակելի մակերեսով և մոտ 40 հատ ավտոկայանատեղիով բնակելի շենքի կառուցապատման աշխատանքներ, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2020 թվականի վերջին եռամսյակում:

Նշված շենքի հարևանությամբ տեղակայված է 4-րդ կարգի վթարային վիճակում գտնվող Արզումանյան փողոցի հ.8ա հասցեում գտնվող շենքը (հիմք՝ 08.11.19 թ. «Բարայան-Լատ նախագիծ» ՍՊԸ-ի (շենքերի, շինությունների տեխնիկական վիճակի հետազննում) եզրակացությունը):

Ծրագրով առաջարկվում է Արզումանյան փողոցի հ.8/1 հասցեի հարևանությամբ գտնվող վթարային շենքի հարակից հատվածում առկա համայնքային սեփականություն 1301.64 քառ. մ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել ընկերությանը՝ բազմաբնակարան շենքային համալիր կառուցելու նպատակով:

Երևան համայնքի կողմից ուղղակի վաճառքի ձևով տրամադրվող հողամասի և վթարային շենքի զբաղեցրած հողամասի վրա նախատեսվում է կառուցել մինչև 18 հարկից բաղկացած բազմաբնակարան երկու շենք՝ ընդհանուր 15.541 քառ. մ բնակելի մակերեսով, որտեղից 800.0 քառ. մ մակերեսով վերանորոգված բնակարաններ կհանձնվեն Երևան համայնքին:

Ներդրումային ծրագիրը բաղկացած է 3 բազմաբնակարան բնակելի շենքից, որոնցից Արզումանյան փողոցի հ.8/1 հասցեում գտնվող շենքի շինարարությունը մեկնարկել է: Ծրագիրն իրականացվելու է փուլերով:

- Առաջին փուլ

Ընկերությունը պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող Արզումանյան փողոցի հ.8/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից տրամադրել 2200.0 քառ. մ մակերեսով բնակելի տարածք՝ Արզումանյան փողոցի հ.8ա հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային շենքի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով:

- Երկրորդ փուլ

Նախատեսվում է կառուցել «Ա» մասնաշենքը՝ մինչև 18 հարկ հարկայնությամբ և ընդհանուր 9271.0 քառ. մ մակերեսով: Նշված փուլը նախատեսվում է սկսել օրենսդրությամբ սահմանված կարգով 1301.64 քառ. մ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գործընթացը վերջնական ավարտին հասցնելուց հետո:

- Երրորդ փուլ

Նախատեսվում է կառուցել «Բ» մասնաշենքը՝ մինչև 18 հարկ հարկայնությամբ և 6270.0 քառ. մ ընդհանուր մակերեսով, որը ծրագրվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով Արզումանյան փողոցի հ.8ա 4-րդ կարգի վթարային շենքի բնակիչներին վերջնական փոխհատուցում տալուց և շենքն ապամոնտաժելուց հետո:

Ընկերությունը պարտավորվում է նաև ապամոնտաժված շենքի հողակտորի մի մասը՝ շուրջ 350.0 քառ. մ մակերեսով, բարեկարգել, կանաչապատել, հիմնել պուրակ և որպես նվեր փոխանցել Երևան համայնքին: Միաժամանակ՝ «Ա» և «Բ» մասնաշենքերի կառուցումից հետո դրանցում 800.0 քառ. մ մակերեսով բնակելի հատվածի վերանորոգումից հետո նույնպես փոխանցել Երևան համայնքին՝ Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով:


Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է կառուցել երկու բազմաբնակարան շենք՝ շուրջ 340 բնակարաններով և մոտ 100 ստորգետնյա ավտոկայանատեղիներով և ավարտին հասցնել մոտ 5 տարում: Ընդհանուր առմամբ իրականացվելու են 11.000.000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի ներդրումներ: Ծրագրի իրականացման ընթացքում աշխատանքով ապահովվելու է 100-120 մարդ և ներգրավվելու են մինչև 10 լիցենզավորված կազմակերպություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Ս Խ Ե Մ Ա

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, «ՆՈՒԲԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՁԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ